ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՀԱՑԻԿԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ

РЕСПУБЛИКА
АРМЕНИЯ
МАРЗ АРМАВИРА
РУКОВОДИТЕЛЬ
СЕЛЬСКОЙ ОБЩИНИ
СЕЛО АЦИК

«24» նոյեմբերի 2011թ.

N 139

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

ՀԱՐԳԱՐԺԱՆ ՊԱՐՈՆ ՄԱՐԶՊԵՏ

Կից ուղարկում ենք Արմավիրի մարզի Հացիկի գյուղական համայնքի ավագանու 2011 թվականի նոյեմբերի 17-ին կայացած թիվ11 արտահերթ որոշումները:
Առդիր՝ 7 թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ *Արթուր Եղիազարյան*

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ 11067-11
«24» 11 2011 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՀԱՑԻԿԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆԻ

РЕСПУБЛИКА
АРМЕНИЯ
МАРЗ АРМАВИРА
СТАРОСТИНА
СЕЛСКОЙ ОБЩИНИ
СЕЛО АЦИК

ՈՐՈՇՈՒՄ

թիվ1

17 նոյեմբերի 2011 թ. N11 նիստի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՑԻԿԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 17-Ի N11 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Հացիկի գյուղական համայնքի ավագանու 2011 թվականի նոյեմբերի 17-ի N11 արտահերթ նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

1. Ասլանյան Սամվել Արտավազդի
2. Արշակյան Համլետ Նշանի
3. Կարապետյան Սերգո Մարտունի
4. Հովհաննիսյան Հայկ Կորյունի
5. Ղարախանյան Հայկ Հարությունի
6. Մինասյան Գագիկ Ռաֆիկի
7. Սարգսյան Վարդան Գագիկի

Համայնքի ղեկավար Ա. Եղիազարյան

2011 թվականի նոյեմբերի 17
գյուղ Հացիկ

ՀԱՍՏԱՏՎԱԾ
Հացիկի գյուղական համայնքի
ավագանու 2011թ. նոյեմբերի 17-ի
N11 արտահերթ նիստի 1 որոշման

Օրակարգ
Հացիկի գյուղական համայնքի ավագանու 2011թ.
N11 արտահերթ նիստի

1. Օրակարգի հաստատման մասին:
2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հացիկի գյուղական համայնքի վարչական տարածքում տեղական տուրքերի և վճարների 2012 թվականի դրույքաչափերը հաստատելու մասին:
3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հացիկի գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերի հաստատման մասին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՀԱՑԻԿԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆԻ

РЕСПУБЛИКА
АРМЕНИЯ
МАРЗ АРМАВИРА
СТАРОСТИНА
СЕЛСКОЙ ОБЩИНИ
СЕЛО АЦИК

ՈՐՈՇՈՒՄ

թիվ 2-Ն

17 նոյեմբերի 2011 թ. N 11 նիստի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՑԻԿԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ և 10-րդ հոդվածներով

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հացիկի գյուղական համայնքի վարչական տարածքում տեղական տուրքերի և վճարների 2012 թվականի դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի :
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

1. Ասլանյան Սամվել Արտավազդի
2. Արշակյան Համլետ Նշանի
3. Կարապետյան Սերգո Մարտունի
4. Հովհաննիսյան Հայկ Կորյունի
5. Ղարախանյան Հայկ Հարությունի
6. Մինասյան Գագիկ Ռաֆիկի
7. Սարգսյան Վարդան Գագիկի

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

2011 թվականի նոյեմբերի 17
գյուղ Հացիկ

Գորիսի գյուղական համայնքի
ավագանու 2011թ. նոյեմբերի 17-ի
N 1/սխտի թիվ 2-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԿԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանել՝ հիմնական օբյեկտների համար՝

1) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող և հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար 5000 /հինգ հազար/ դրամ:

2) սույն կետի 1) ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

ա) 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 15 000 /տասնհինգ հազար/ դրամ.

բ) 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 25000 /քսանհինգ հազար/ դրամ.

գ) 1001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 30 000 /երեսուն հազար/ դրամ.

ոչ հիմնական շինությունների տեղադրման համար

3) մինչև 20 /քսան/ քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 1500 /հազար հինգ հարյուր/ դրամ,

4) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 2500 /երկու հազար հինգ հարյուր/ դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքների /բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի/ համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

1) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն՝ 1000 /հազար/ դրամ.

2) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) բացի սույն կետի 1) ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն որոշման հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխության մասով.

3) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն որոշման հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3.Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանել 3000 /երեք հազար/ դրամ:

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանել՝

1) ոգելից խմիչքների վաճառքի թույլտվության համար հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար 2000 /երկու հազար/ դրամ:

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար 2000 /երկու հազար/ դրամ:

5. Համայնքի տարածքում

1) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանել յուրաքանչյուր օրվա համար 350 դրամ:

2) հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 150 000 /մեկ հարյուր հիսուն հազար/ դրամ:

6. Համայնքի տարածքում թանկարժեք մետաղներով պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 50 000 / հիսուն հազար/ դրամ:

7. Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները /սաունաները/, խաղատները ժամը 24. 00-ից հետո աշխատելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝

1) առևտրի օբյեկտների համար՝ 25 000 /քսանհինգ հազար/ դրամ.

2) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 50 000 /հիսուն հազար/ դրամ.

3) բաղնիքների /սաունաների/ համար՝ 200 000 /երկու հարյուր հազար/ դրամ.

4) խաղատների կազմակերպման համար՝ 500 000 /հինգ հարյուր հազար/ դրամ.

5) շահումով խաղերի կազմակերպման համար՝ 250 000 /երկու հարյուր հազար/ դրամ.

6) վիճակախաղերի կազմակերպման համար՝ 100 000 /մեկ հարյուր հազար/ դրամ.

8. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանել՝

1) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1000 /մեկ հազար/ դրամ:

2) թունդ ալկոհոլային /սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս/ արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2500 / երկու հազար հինգ հարյուր/ դրամ:

3) այլ արտաքին գովազդի համար՝ 500 /հինգ հարյուր/ դրամ.

4) դատարկ գովազդային վահանակների համար՝ 700 /յոթ հարյուր/ դրամ.

9. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեներ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 1000 /մեկ հազար/ դրամ.

10. Համայնքի տարածքում մարդատար տաքսու /բացառությամբ երթուղային տաքսիների/ ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 5000 /հինգ հազար/ դրամ.

11. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկա-տնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար՝ գյուղապետարանի մատուցած ծառայությունների դիմաց սահմանել փոխհատուցման վճար 5000 /հինգ հազար/ դրամ.

12. Գյուղապետարանի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալությամբ տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար՝ գյուղապետարանի մատուցած ծառայությունների դիմաց սահմանել փոխհատուցման վճար 1000 /մեկ հազար/ դրամ.

13. Գյուղապետարանի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար՝ մասնակիցների վճար 5000 /հինգ հազար/ դրամ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՀԱՑԻԿԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆԻ

РЕСПУБЛИКА
АРМЕНИЯ
МАРЗ АРМАВИРА
СТАРОСТИНА
СЕЛЬСКОЙ ОБЩИНИ
СЕЛО АЦИК

ՈՐՈՇՈՒՄ

N 3

17 նոյեմբերի 2011 թ. N 11 նիստի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՑԻԿԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԻ և ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետով ավագանին

Որոշեց

3. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հացիկի գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2012 թվականի հունվարի 01-ից.

Ավագանու անդամներ՝

Ասլանյան Սամվել Արտավազդի
Արշակյան Համլետ Նշանի
Կարապետյան Սերգո Մարտունի
Հովհաննիսյան Հայկ Կորյունի
Ղարախանյան Հայկ Հարությունի
Մինասյան Գագիկ Ռաֆիկի
Սարգսյան Վարդան Գագիկի

Համայնքի ղեկավար Ա. Եղիազարյան

2010 թվականի նոյեմբեր 17
գյուղ Հացիկ

ՀԱՎԵԼՎԱԾ

Հավելված
Հացիկի գյուղական համայնքի
ավագանու 2011 թ. նոյեմբերի 17-ի
N 11 նիստի թիվ 3 որոշման

ՀԱՑԻԿԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ և ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

հ/հ	Պաշտոնի անվանումը	Պաշտոնի ծածկագիրը	դրույքը	2011թ.-ին հաստատված դրույքաչափը (հազար դրամ)	2012թ.-ին հաստատված դրույքաչափը (հազար դրամ)
1	Համայնքի ղեկավար		1	150.0	150.0
2	Համայնքի ղեկավարի տեղակալ		1	90.0	90.0
3	Աշխատակազմի քարտուղար	1.2--1	1	90.0	90.0
4	Գլխավոր մասնագետ	2.3-1	1	65.0	65.0
5	Առաջատար մասնագետ	3.1--1	1	60,0	60,0
6	Առաջատար մասնագետ	3.1--2	1	60.0	60.0
7	1-ին կարգի մասնագետ	3.2-1	1	40.0	40.0
8	1-ին կարգի մասնագետ	3.2-2	1	40.0	40.0
9	2-րդ կարգի մասնագետ	3.3--1	1	30.0	30.0
10	գրադարանավարուհի		1	30.0	30.0
11	խմավար		1	40.0	40.0
12	Հավաքարար		1	30.0	30.0
13	այգեպան		1	30.0	30.0
14	վարորդ		1	50.0	50.0
15	պոմպավար		1	40.0	40.0
16	մեխանիզատոր		1	30.0	30.0
17	պահակ		1	30.0	30.0
	Ընդամենը			935.0	935.0